

Արմավիրի մարզի Արաքս համայնքի
ղեկավարի 2013թ. կիսամյակային/հուլիս-դեկտեմբեր/
գործունեության հաշվետվություն

Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքացիների
իրավունքների պաշտպանության բնագավառում.

Կատարվել է համայնքի բնակիչ հանդիսացող 250 անձանց
ընդունելություն և դիմումների քննարկում , որոնցից 235-ին տրվել է
դրական լուծում:

--Կատարվել է համայնքի 10 ընտանիքի ընտանեկան նպաստի
համակարգում ընդգրկվելու փաստագրման աշխատանքները:

-- Նոտարական գրասենյակում, Ք Կ Ա Գ - ի բաժնում, անձնագրային
բաժնում, կադաստրի տարածքային ստորաբաժնում 50 անգամ
միջնորդությամբ հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական
շահերը պաշտպանելու նպատակով:

---Տրվել է 281 տեղեկանքներ:

Համայնքի ղեկավարի գործունեությունը պաշտպանության
բնագավառում.

--- Աջակցել է պատերազմի վետերանների և զոհված, հաշմանդամ
ազատամարտիկների սոցիալական խնդիրների լուծմանը, տրվել է
ֆինանսական օգնություններ, կատարվել է սեպտեմբերի 21-ին
նվիրված միջոցառումներ

---Նախապատրաստական աշխատանքներ է տարվել աշնան գորակոչի համար, կատարվել է Արմավիրի մարզպետի կողմից ավանդույթ դարձաց աշնան գորակոչերին նվիրված միջոցառումները:

Համայնքի ղեկավարի գործունեությունը

քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում.

--Համայնքի ղեկավարը անմիջական վերահսկողություն է իրականացրել համայնքի սեփականություն համարվող հողերի, ֆիզիկական անձանց պատկանող հողերի նպատակային օգտագործմանը.

---Կատարվել է համայնքի սեփականաշնորհված հողերի և շենքերի առաջին պետական գրանցման վկայականների աշխատանքները:

Համայնքի ղեկավարի գործունեությունը կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում.

---Կազմակերպել է համայնքի բոլոր փողոցների աղբահանությունը:

---Կատարել է համայնքի խմելու ջրի խողովակաշարի առանձին հատվածների վերանորոգման աշխատանքները, ինչպես նաև խմելու ջրի քլորացման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի գործունեությունը

տրանսպորտի,առևտրի և սպասարկման բնագավառում.

---Կազմակերպել է համայնքային ենթակայության 4.5կմ երկարության ճանապարհների երկու կամուրջների պահպանման աշխատանքները:

---Մշակել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները:

---Վերահսկողություն է սահմանել չնախատեսված վայրերում և առանց սառնարանային պայմանների՝ հատկապես արագ փչացող սննդամթերքի(կաթնամթերք, կրեմային հրուշակեղեն և այլն) և փափուկ պաղպաղակի բացօթյա վաճառքը: Եռամսյակային ստուգումներ են կատարվել համայնքում գործող առևտրի կետերում:

Համայնքի ղեկավարի գործունեությունը կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում.

--Համայնքի ղեկավարը աջակցել է համայնքի դպրոցի երգչախմբի, կարատեի խմբակների գործունեությանը, պարբերաբար օժանդակել է դրամական օգնությունով, մասնավորապես դպրոցում գործող երգչախմբին մարզային և հանրապետական փառատոնների մասնակցելու համար:

---Համայնքի բնակչության համար կազմակերպվել է համերգ միջոցառում 1 անգամ:

Համայնքի ղեկավարի գործունեությունն առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում.

---Համայնքի ղեկավարը սպորտի բնագավառում կազմակերպել է ֆուտբոլի հրապարակի վերականգնմանը, կայացել է ընկերական ֆուտբոլային հանդիպումներ հարևան գյուղերի թիմերի հետ:

---Համայնքում գործում է կարատեի խմբակը:

---Համայնքում գործում է պարի խմբակ:

---Կազմակերպվել է համայնքի զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված ֆուտբոլի մրցաշար:

Համայնքի ղեկավարի գործունեությունը գյուղատնտեսության բնագավառում

---Համայնքի ղեկավարը իր աշխատակազմի միջոցով կազմակերպել է համայնքի բոլոր տեսակի ցանքատարածությունների, այգիների չափերի վերաբերյալ ամենամյա հաշվետվություն անասնազխաքանակի հաշվառման, անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային, կենդանիների հիվանդությունների կանխման աշխատանքներ:

Համայնքի առաջ ծառայած հիմնախնդիրներ

---Մշակույթի տան և մանկապարտեզի վերանորոգում.

---Ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգում.

---Փողոցների լուսավորության վերանորոգում.

ԱՐԱՔՍ



Ռ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ